ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ -	011401.00.6 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ -	011401.13.6 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ -	ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐ

ՎԱՆԱՁՈՐ 2022

1. Մասնագիտության թվանիշը և անվանումը	011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
2. Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը	011401.13.6 Երաժշտական կրթություն
3. Շնորհվող որակավորումը	Մանկավարժության բակալավր
4. Կրեդիտների քանակը	240
5. Ուսումնառության լեզուն	Հայերեն
6. Ուսուցման ձևը	Առկա
7. Ուսումնառության ժամկետը	2019-2023թթ.

8. Կրթական ծրագրի ընդունելության պահանջները

«Երաժշտական կրթություն ե մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ կրթության վկայական և հաջողությամբ հանձնած լինի ընդունելության քննությունները ՝ 1. ԵՏՍ - ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ՍՈԼՖԵՋԻՈ (բանավոր-գրավոր) 2. ՆԵՍԿ և երգ - ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐՈՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

9. Կրթական ծրագրի նպատակները

Սովորողների արժեքային ուղղորդվածության, հանդուրժողականության, քաղաքացիական, մարդասիրական և հայրենասիրական համոզմունքների ձևավորում: Մասնագիտական - մանկավարժական գործունեության մեջ կրթական, դաստիարակչական և զարգացման նպատակների իրականացմանը նպաստող կրթա-կան և հոգեբանական միջավայրի ստեղծում և պահպանում: Սովորողների՝ տարբեր տարիքային փուլերում անատոմիական-ֆիզիոլոգիական, ֆիզիկական և հոգեկան զարգացման պայմանների ապահովում և հիմնական օրինաչափությունների հաշվառում:

10. Կրթական ծրագրի կրթական վերջնարդյունքները

Գիտենա՝

- ՀՀ Սահմանադրությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, կրթու-թյան և իր մասնագիտությանը վերաբերող նորմատիվ և իրավական ակտերը:
- Սոցիալ-հումանիտար և տնտեսագիտական առարկաների հիմնական դրույթները:
- Անձի ձևավորման և զարգացման օրինաչափությունները:
- Երեխաների իրավունքների հռչակագրի և 'Երեխայի իրավունքների մասին' ՀՀ օրենքի դրույթները:
- Պետության կրթական քաղաքականության ուղենիշները:
- Մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերություն-ները կարգավորող էթիկական և իրավական նորմերը:
- Կրթության կարևորությունը քաղաքակրթության զարգացման արդի ժամանակշրջանում:
- Կրթության կազմակերպման հիմնական ձևերը, աստիճանները և մակար-դակները:
- Ուսումնական գործընթաց իրականացնելու տեխնոլոգիաները և մեթո-դիկաները:
- Փիլիսոփայության հիմունքները:

- Հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքագիտական զարգացումները:
- Մանկավարժության, հոգեբանության և ուսուցման տեսության սկզբունք-ները և հիմնական դրույթները:
- Անձի ձևավորման և զարգացման օրինաչափությունները:
- Դպրոցականների զարգացման անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատ-կություններն ու օրինաչափությունները:
- Ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները:
- Ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքները և հայեցա-կարգերը, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրները:
- Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելակերպի կանոնները:
- Երաժշտություն առարկան որպես արվեստի ճյուղ, նրա տեղը արվեստների մեջ և դերը մարդու կյանքում:

- Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործությունը:
- Հայ և արտասահմանյան երաժշտության պատմությունը /զարգացման փուլերը, հիմնական ուղղությունները, դրանց ներկայացուցիչներին/:
- Սոլֆեջիոյի դերը երեխաների երաժշտական ընդունակությունների դաստիարակության մեջ:
- Երաժշտական արտահայտչամիջոցները:
- Երաժշտության տեսության /հարմոնիա, պոլիֆոնիա, երաժշտական ստեղծագործության վերլուծություն/ ծագումն ու պատմական զարգացումը, օրինաչափությունները, երաժշտատեսական հիմնական հասկացությունները:
- Հոմոֆոնիայի և պոլիֆոնիայի տեսակները, դրանց առանձնահատկությունները, ձևերը և զարգացման միջոցները:
- Երաժշտական ստեծագործությունների ոճերը, ձևերը, ժանրերը:
- Երաժշտական նվագարանները, դրանց ծագումն ու զարգացումը, տեմբրային առանձնահատկությունները:
- Ռիթմիկայի դերը երեխաների երաժշտական դաստիարակության մեջ, հայկական և այլազգի ժողովրդական պարերի տեսակները:
- Երաժշտության դասավանդման տեսությունը և մեթոդները:
- Երգչախմբի հետ աշխատելու մեթոդները, խմբակային երգեցողության առանձնահատկությունները, վոկալ-խմբերգային ստեղծագործության մեկնաբանման և յուրացման մեթոդները:
- Երգացանկի կազմմանը ներկայացվող պահանջները:
- Հիմնական երաժշտական նվագարանի առանձնահատկությունները, դրա վրա աշխատելու մասնագիտական սկզբունքները, նվագելու տեխնիկան կատարելագործելու մեթոդները:
- Նվագակցության և անսամբլի արվեստի առանձնահատկությունն

Կարողանա՝

- Կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի և գիտության օրենքների հիմնադրույթների վրա:
- Գրագետ, ճիշտ ձևակերպել գրավոր և բանավոր խոսքը:
- Հանրակրթական դպրոցում իրականացնի գեղարվեստական կրթության գործընթացը, երաժշտական արվեստի միջոցներով լուծել սովորողների զարգացման, ուսուցման և դաստիարակության խնդիրները:
- Հավասարապես ուսումնասիրել երաժշտության տեսությունը, պատմությունը և դասավանդման մեթոդիկան, տիրապետել կատարողական արվեստին:
- Հստակ տարբերակել երաժշտական ժամանակաշրջանները, ոճերը, ուղղությունները:

- Երաժշտության բնագավառում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները:
- Կատարել գիտական եզրահանգումների տրամաբանական փաստարկում:
- Հիմնվելով տեսական գիտելիքների վրա՝ դրանք կիրառել գործնական, ստեղծագործական աշխատանքներում:
- Ղեկավարել մանկական երգչախումբ, հանրակրթական դպրոցներում ստեղծագործաբար իրականացնել վոկալ-խմբերգային աշխատանք:
- Մասնագիտական համապատասխան մակարդակով օգտվել նվագարանից, գրագետ, ճիշտ մեկնաբանել երաժշտական ստեղծագործությունը:
- Նվագակցել անհատին կամ համույթին:
- Գործնական աշխատանքի ընթացքում որոշել ստեղծագործության գաղափարական ուղղվածությունը, դրա կապը ժամանակին տիրապետող պատկերացումների հետ:
- Տեսական և կատարողական վերլուծություններում անդրադառնալ ձևի, ոճի, կատարողական առանձնահատկություններին:
- Մասնակցել գիտաժողովներին, սեմինարներին, համերգներին, քննարկումներին և այլ միջոցառումներին:
- Օգտվել երաժշտության ուսումնասիրմանն ու դասավանդմանը նպաստող տեխնիկական միջոցներից և ծրագրերից:
- Ստեղծել 'Երաժշտություն' առարկայի գծով մեթոդական առաջադրանքներ:

Տիրապետի՝

- Անձնական և հասարակական հարաբերությունները կանոնավորող վար-վելակերպի բարոյական և իրավական նորմերին:
- Մասնագիտական ոլորտի լեզվին (գրավոր և բանավոր) և երկու օտար լեզուներով հաղորդակցմանը:
- Ֆիզիկական կատարելագործման ուղիներին:
- Տեղեկատվության հավաքագրման, պահպանման, մշակման և համակարգ-ման համակարգչային մեթոդներին:
- Կրթության և դաստիարակության մանկավարժական ժամանակակից մեթոդ-ներին և տեխնոլոգիաներին:
- Երաժշտություն՝ առարկային, նրա տեսական և գործնական ոլորտներին:
- Երաժշտության տեսական և գործնական հմտություններին:
- Դասավանդման պլանավորման և կազմակերպման մեթոդներին:
- Հնարների և գիտելիքների անհրաժեշտ համակարգին՝ հետագա մասնագի-տական գործունեության համար:
- Վերլուծության անհրաժեշտ մեթոդի ընտրության և դրա դասավանդման մեթոդիկայի մեթոդաբանությանը:
- Խմբավարական ունակություններին, հմտություններին և տեխնիկային:
- Երգչային ունակություններին, հմտություններին և տեխնիկային, անսամբլային երգեցողության առանձնահատկություններին:
- Դպրոցական տարիքի նվագացանկին՝ երաժշտության դասերին պատշաճ մակարդակով ներկայացնելու համար:
- Նվագարանի և երգչի հետ աշխատելու առանձնահատկություններին, մենակատարին նվագակցելու ընթացքում ձայնի յուրահատուկ հավասարակշռության առանձնահատկություններին: Զուգընկերոջ հետ միասին ստեղծագործության ամբողջական կերպար ստեղծելու յուրահատկություններին:

11. Կրթական ծրագրի ուսումնական պլանը

Կցվում է
12. Գնահատման ձևերը
ՎՊՀ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ: Մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին: Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում. - ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, - ինքնուրույն կատարվող աշխատանքներ, - գործնական (սեմինար) և պրակտիկում (լաբորատոր) աշխատանքներին ուսանողի մասնակցություն, - ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ կամ քննություններ:
13. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները
Երաժշտություն մասնագիտությամբ բակալավրը ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո կարող է աշխատել հետևյալ բնագավառներում՝ 1. հանրակրթական դպրոցներում՝ որպես երաժշտություն առարկայի ուսուցիչ: 2. երաժշտական ստուդիաներում, արվեստի դպրոցներում, քոլեջներում: Մասնագիտական գործունեության օբյեկտները Ա. հանրակրթական դպրոցներ: Բ. երաժշտական ստուդիաներ, արվեստի դպրոցներ, վարժարաններ, քոլեջներ: Գ. բարձրագույն, միջին և նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններ:
14. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը
Սույն կրթական ծրագրի համար հասանելի են ուսումնառության տարբեր ռեսուրսներ, որոնցից են դասընթացի ուսումնական ծրագրին համապատասխան ուսումնամեթոդական նյութերը՝ դասախոսությունների կոնսպեկտներ, առաջարկվող մասնագիտական գրականությունը, վերջիններիս էլեկտրոնային տարբերակները, գրադարանային ֆոնդը, ժամանակակից տեխնոլոգիական կաբինետները: Դասավանդման և ուսումնառության որակի վերահսկման արդյունավետության բարձրացման համար մի շարք կրթական մոդուլների համար կիրառվում է ուսումնառության, անհրաժեշտության դեպքում, Moodle և համալսարանի հեռավար ուսուցման հարթակները:
15. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս
ՀՀ Կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714 - Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրեպետության կառավարության 2013 թ. 01.31 դ 85 Ն որոշմամբ: